ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է՝
ԵՊԲՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 29.04.2016
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 06 ՈՐՈՇՄԱՄԲ,
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 19.06.2026 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 26-06-06-02 ՈՐՈՇՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է
ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով սահմանվում է Համալսարանի վճարովի համակարգի սովորողների ուսման վճարի չափերը, ըստ կրթական ծրագրերի և համակարգերի, ինչպես նաև վճարման կանոնները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Համալսարանի բարձրագույն կրթության՝ անընդհատ և ինտեգրված, բակալավրի, մագիստրոսական կրթական ծրագրերում սովորող ուսանողների վրա, կլինիկական օրդինա-տորների (ռեզիդենտների), ասպիրանտների, դոկտորանտների, հայցորդների վրա, ինչպես նաև քոլեջի, նախապատրաստական կրթության ուսանողների և սույն կանոնակարգով նախատեսված այլ սովորողների վրա (այսուհետ՝ սովորողներ):

3. Սույն կանոնակարգով նախատեսված ուսման վճարի չափերը տարածվում են նաև Համալսարանում կցագրված և սովորող անձանց վրա:

4. Համալսարանի սովորողների ուսման վճարի չափերը սահմանվում են հիմք ընդունելով կրթական ծրագրերի առանձնահատկությունները, կրթության ուսուցման լեզուն, կազմակերպման ձևերը և այլ հանգամանքներ:

5. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

6. Սույն կանոնակարգով սահմանված ուսման վճարի չափերը չեն տարածվում առանձնահատուկ պայմաններով ընդունված օտարերկրացի (այդ թվում ոչ ռեզիդենտ) սովորողների վրա, որոնց ուսման վճարի չափերը և

կրեդիտների արժեքը սահմանվում են համաձայն ռեկտորի հրամանի և (կամ) սովորողի հետ կնքված կրթության մասին պայմանագրի:

Հոդված 2. Ընդհանուր բժշկության ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսման վճարի չափերը

Ընդհանուր բժշկության ֆակուլտետի բարձրագույն կրթության անընդհատ և ինտեգրված 6 տարի տևողությամբ «Բուժական գործ» կրթական ծրագրի ուսուցման համար սահմանվում են հետևյալ վճարի չափերը.

1) «**Բուժական գործ**» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 21.670 (քսանմեկ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

2) «**Բուժական գործ**» **ռուսերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ և մեկ կրեդիտի արժեք՝ 33.350 (երեսուներեք հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3) «**Բուժական գործ**» **անգլերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 2.600.000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 43.340 (քառասուներեք հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Հոդված 3. Ստոմատոլոգիական ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսման վճարի չափերը

Ստոմատոլոգիական ֆակուլտետի բարձրագույն կրթության անընդհատ և ինտեգրված 5 տարի տևողությամբ «Ստոմատոլոգիա» կրթական ծրագրի ուսուցման համար սահմանվում են հետևյալ վճարի չափերը.

1) «**Ստոմատոլոգիա**» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 16.670 (տասնվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

2) «**Ստոմատոլոգիա**» **ռուսերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ և մեկ կրեդիտի արժեք՝ 33.350 (երեսուներեք հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

3) «**Ստոմատոլոգիա**» **անգլերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 2.600.000 (երկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 43.340 (քառասուներեք հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Հոդված 4. Հանրային առողջության ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսման վճարի չափերը

1. Հանրային առողջության ֆակուլտետի բարձրագույն կրթության մագիստրատուրայի 1.5 տարի տևողությամբ կրթական ծրագրերի ուսուցման համար սահմանվում են հետևյալ վճարի չափերը.

1) «Առողջապահության կազմակերպում և կառավարում» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 8.340 (ութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

2) «Շրջակա միջավայրի հիգիենա» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 8.340 (ութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

3) «Համաճարակաբանություն» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 8.340 (ութ հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

2. Հանրային առողջության ֆակուլտետի բարձրագույն կրթության մագիստրատուրայի 1 տարի տևողությամբ «Բուժհաստատությունների կառավարում» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 16.670 (տասնվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

Հոդված 5. Դեղագիտական ֆակուլտետի կրթական ծրագրերի ուսման վճարի չափերը

1. Դեղագիական ֆակուլտետի բարձրագույն կրթության 4 տարի տևողությամբ «Դեղագիտության բակալավր» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 10.000 (տաս հազար) ՀՀ դրամ:

2. Դեղագիտական ֆակուլտետի բարձրագույն կրթության 1 տարի տևողությամբ «Դեղագիտության մագիստրոս» **հայերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 650.000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 10.840 (տաս հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

3. Դեղագիական ֆակուլտետի բարձրագույն կրթության 4 տարի տևողությամբ «Դեղագիտության բակալավր» **ռուսերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար

սահմանվում է՝ 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ:

4. Դեղագիտական ֆակուլտետի բարձրագույն կրթության 1 տարի տևողությամբ «Դեղագիտության մագիստրոս» **ռուսերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է 1.250.000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 20.840 (քսան հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

5. Դեղագիական ֆակուլտետի բարձրագույն կրթության 4 տարի տևողությամբ «Դեղագիտության բակալավր» **անգլերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝ 2.100.000 (երկու միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:

6. Դեղագիտական ֆակուլտետի բարձրագույն կրթության 1 տարի տևողությամբ «Դեղագիտության մագիստրոս» **անգլերեն ուսուցմամբ** կրթական ծրագրում սովորողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է 2.200.000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ և մեկ կրեդիտի արժեք՝ 36.670 (երեսունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

Հոդված 6. Կլինիկական օրդինատուրայի (ռեզիդենտուրայի) սովորողների հայերեն ուսման վճարի չափերը

1. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում **հայերեն ուսուցմամբ** սովորողների մեկ տարվա համար սահմանվում են հետևյալ տարեկան ուսման վճարի չափերը.

450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնա-գիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) համաճարակաբանություն,
2) ախտաբանություն,

Նեղ մասնագիտություն

1) այրվածքաբանություն,
2) բժշկական թունաբանություն:

600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) արյունաբանություն,
2) մանկաբուժություն,
3) մանկական արյունաբանություն,
4) մանկական նյարդաբանություն,
5) մանկական ստոմատոլոգիա,
6) մանկական սրտաբանություն,

7) մանկական ֆիզիկական և վերականգնողական բժշկություն,
8) մանկական վիրաբուժություն,
9) մանկական վնասվածքաբանություն և օրթոպեդիա,
10) բժշկական մանրէաբանություն,
11) նեոնատոլոգիա,
12) ֆիզիկական և վերականգնողական բժշկություն,

Նեղ մասնագիտություն

1) զարգացման մանկաբուժություն,
2) մանկական գաստրոէնտերոլոգիա,
3) մանկական դիմածնոտային վիրաբուժություն,
4) մանկական ներզատաբանություն,
5) մանկական վարակային հիվանդություններ,
6) մանկական կլինիկական իմունոլոգիա և ալերգոլոգիա,
7) երեխաների և դառահասների հոգեբուժություն,
8) մանկական մաշկաբանություն,
9) մանկական երիկամաբանություն,
10) մանկական թոքաբանություն,
11) մանկական ռևմատոլոգիա,
12) կախվածությունների բժշկություն,
13) մանկական ակնաբանություն,
14) մանկական անեսթեզիոլոգիա և ռեանիմատոլոգիա,
15) մանկական գինեկոլոգիա,
16) մանկական նյարդավիրաբուժություն,
17) մանկական քիթ-կոկորդ-ականջաբանություն,
18) տրանսֆուզոլոգիա և արյան պաշարում,
19) ֆիզիոթերապիա,
20) մանկական ուրոլոգիա,
21) մանկական կրծքային վիրաբուժություն,
22) ինտենսիվ բժշկություն (թերապիա):

700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա,
2) բժշկական գենետիկա,
3) ընտանեկան բժշկություն,
4) վարակային հիվանդություններ,
5) հոգեբուժություն,
6) ներքին հիվանդություններ,

7) անհետաձգելի բժշկություն,
8) ուռուցքաբանություն,

Նեղ մասնագիտություն

1) աղեստամոքսաբանություն և լյարդաբանություն,
2) կլինիկական դեղաբանություն,
3) ալերգոլոգիա և կլինիկական իմունոլոգիա,
4) հոգեթերապիա,
5) երիկամաբանություն,
6) թոքաբանույուն,
7) ռևմատոլոգիա,
8) աղեստամոքսաբանություն և լյարդաբանություն,
9) սպորտային բժշկություն:

850.000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) անոթային վիրաբուժություն,
2) դատաբժշկական փորձաքննություն,
3) լաբորատոր գենետիկա,
4) կլինիկական լաբորատոր ախտորոշում,
5) կրծքային վիրաբուժություն,
6) մաշկաբանություն և սեռավարակաբանություն,
7) նյարդաբանություն,
8) նյարդավիրաբուժություն,
9) սրտաբանություն,
10) սրտային վիրաբուժություն:

Նեղ մասնագիտություն

1) ներզատաբանություն,
2) կոլոռեկտալ վիրաբուժություն,
3) սեռախտաբանություն:

950.000 (ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) ակնաբանություն,
2) դիմածնոտային վիրաբուժություն,
3) որովայնային վիրաբուժություն,
4) ուրոլոգիա,
5) պլաստիկ և վերակառուցողական վիրաբուժություն,
6) վնասվածքաբանություն և օրթոպեդիա,

7) քիթ կոկորդ ականջաբանություն:

Նեղ մասնագիտություն

1) թերապևտիկ ստոմատոլոգիա,

2) էնդոկրին վիրաբուժություն:

1.150.000 (մեկ միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Հիմնական մասնագիտություն

1) ընդհանուր ստոմատոլոգիա,

2) ռադիոլոգիա,

3) մանկաբարձություն և գինեկոլոգիա,

4) օրթոդոնտիա,

Նեղ մասնագիտություն

1) վիրաբուժական ստոմատոլոգիա,

2) օրթոպեդիկ ստոմատոլոգիա:

1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ հետևյալ մասնագիտությունների համար՝

Նեղ մասնագիտություն

1) էնդովասկուլյար նյարդավիրաբուժություն,
2) ինտերվենցիոն սրտաբանություն,
3) վերարտադրողական բժշկություն (ռեպրոդուկտոլոգիա),
4) բժշկական կոսմետոլոգիա,
5) պարօդոնտոլոգիա:

1.300.000 (մեկ միլիոն 3 հարյուր հազար) ՀՀ դրամ ռենտգեն-էնդովասկուլյառ վիրաբուժություն (էնդովասկուլյառ անոթային վիրաբուժություն) ***նեղ մասնագիտություն***:

2. Կլինիկական օրդինատուրայում երկրորդ մասնագիտությամբ կրթությունն իրականացվում է միայն վճարովի հիմունքներով, բացառությամբ նպատակային տեղերում սովորող կլինիկական օրդինատորների:

Հոդված 7. Կլինիկական օրդինատուրայի (ռեզիդենտուրայի) սովորողների օտար լեզուներով ուսման վճարի չափերը

1. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում **ռուսերեն ուսուցմամբ** սովորողների մեկ տարվա բոլոր մասնագիտությունների համար սահմանվում է 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

2. Համալսարանի կլինիկական օրդինատուրայում **անգլերեն ուսուցմամբ** սովորողների մեկ տարվա բոլոր մասնագիտությունների համար սահմանվում է՝ 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Հոդված 8. Հետազոտողների ուսման վճարի չափերը

1. Համալսարանի ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի սովորողների, հայցորդների (այսուհետ՝ հետազոտողներ) հայերեն առկա ուսուցման համար

սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ տարեկան վճարի չափ: Սույն մասով սահմանված անձանց համար տարեկան ուսման վճար չի սահմանվում, եթե վերջիններս Համալսարանի աշխատող կամ զինծառայող հետազոտողներ են կամ Համալսարանի հետ կնքել են գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու և համագործակցության մասին պայմանագիր:

2. Հետազոտողների հայերեն հեռակա ուսուցման և հետազոտող հայցորդների հայերեն ուսուցման համար սահմանվում է 550.000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տարեկան վճարի չափ: Սույն մասով սահմանված անձանց համար տարեկան ուսման վճար չի սահմանվում, եթե վերջիններս Համալսարանի աշխատող կամ զինծառայող հետազոտողներ են:

3. Հետազոտողների օտար լեզուներով առկա ուսուցման համար, այդ թվում «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոններով» ընդունված ասպիրանտների համար սահմանվում է 2.400.000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

4. Հետազոտողների օտար լեզուներով հեռակա ուսուցման համար, այդ թվում «ՀՀ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կանոններով» ընդունված ասպիրանտների համար սահմանվում է 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:

5. Հետազոտողի կրեդիտային համակարգով հայերեն ուսուցման համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը.

1) ընդհանուր ուսումնական կրթամաս (20 կրեդիտ)՝ 75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ,

2) մասնագիտական ուսումնական կրթամաս (20 կրեդիտ)՝ 75.000 (յոթանա- սունհինգ հազար) ՀՀ դրամ:

6. Հետազոտողի կրեդիտային համակարգով օտար լեզվով ուսուցման համար սահմանվում են վճարի հետևյալ չափերը՝

1) ընդհանուր ուսումնական կրթամաս (16 կրեդիտ)՝ 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2) մասնագիտական ուսումնական կրթամաս (21 կրեդիտ)՝ 350.000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

7. Համալսարանի Էթիկայի կոմիտեի փորձաքննության համար սահմանվում են միանվագ վճարի հետևյալ չափերը՝

1) անհատ հետազոտողների համար՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ,

2) կազմակերպությունների համար՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

8. Համալսարանում հետազոտողի որակավորման քննություններին մասնակցելու համար սահմանվում են միանվագ վճարի հետևյալ չափերը՝

1) որակավորման քննությունների ընդհանուր կրթական առարկաների համար՝ օտար լեզու և ինֆորմատիկա՝ 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ,

2) մասնագիտական առարկաների համար՝ 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

9. Համալսարանի աշխատողների և Համալսարանի վճարովի համակարգի հետազոտողների համար որակավորման քննություններն ու

Էթիկայի կոմիտեի փորձաքննությունն անվճար են:

10. Միայն նախնական փորձաքննության համար սահմանվում է 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ վճարի չափը:

11. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հետազոտողների ուսման վճարի չափերով են վճարում հետևյալ հանգամանք ունեցող հետազոտողները՝

1) Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախք և Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված ու բնակվող հայազգի հետազոտողները,

2) Հայաստանում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի հետազոտողները,

3) ծագումով հայ օտարերկրյա քաղաքացի հետազոտողները, որոնց մշտական բնակությունը օտարերկրյա պետությունում վտանգված է (առկա է կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ):

Հոդված 9. Քոլեջի սովորողների ուսման վճարի չափերը

1. Համալսարանի քոլեջում 2024-2025 ուսումնական տարվանից միջնակարգ (լրիվ) և հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգ ընդունված ուսանողների (բացառությամբ «Դեղագործություն» մասնագիտությամբ) մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 630.000 (վեց հարյուր երեսուն հազար) դրամ ուսման վճարի չափ:

2. Համալսարանի քոլեջում 2023-2024 ուսումնական տարվա՝ միջնակարգ (լրիվ) և հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգ ընդունված մասնագիտություններով, այդ թվում դեղագործություն մասնագիտությամբ ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 490.000 (չորս հարյուր ինսուն հազար) դրամ ուսման վճարի չափ:

3. Համալսարանի քոլեջում 2021-2022 ուսումնական տարվանից 2023-2024 ուսումնական տարին միջնակարգ (լրիվ) և հիմնական ընդհանուր կրթության հիմքով վճարովի համակարգ ընդունված ուսանողների մեկ ուսումնական տարվա հայերեն լեզվով ուսուցման համար սահմանվում է 340.000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ ուսման վճարի չափ:

4. Սույն հոդվածով սահմանված ուսման վճարի չափերը չեն տարածվում «Բուժակ» մասնագիտությամբ ուսանողների վրա:

Հոդված 10. Նախապատրաստական կրթության վճարի չափերը

1. Համալսարանի նախապատրաստական դասընթացներում սովորող հայազգի օտարերկրյա քաղաքացի ուսանողների մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է՝

1) հայերեն և ռուսերեն ուսուցում՝ 650.000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ,

2) անգլերեն ուսուցում՝ 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ ուսման վճարի

չափ:

2. Նախապատրաստական դասընթացներում սովորող օտարերկրյա քաղաքացի ուսանողների անգլերեն և ռուսերեն լեզուներով ուսուցման մեկ ուսումնական տարվա համար սահմանվում է 1.200.000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ ուսման վճարի չափ:

3. Համալսարանի նախապատրաստական բաժնից 2021-2022 ուսումնական տարում Համալսարան ընդունված ուսանողների վրա տարածվում է մինչև 2021-2022 ուսումնական տարին Համալսարան ընդունված հայազգի ուսանողների համար սահմանված ուսման վճարի չափերը:

Հոդված 11. Ընդհանուր պայմաններ

1. Համալսարանի բարձրագույն կրթական համակարգի համար սահմանված ուսման վճարները Համալսարանին պետք է փոխանցվեն սովորողների հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

2. Սովորողն իրավունք ունի նաև ուսման վճարը փոխանցել ըստ ուսումնական տարվա ամիսների՝ իր դիմումի համաձայն:

3. Սովորողի հետ կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում Համալսարանն իրավասու է դադարեցնել սովորողի մասնակցությունն ուսումնական գործընթացին, իսկ հաջորդող տասնհինգ օրյա ժամկետում կրկին չվճարելու դեպքում՝ ուսանողը կարող է հեռացվել Համալսարանից:

Սույն մասով սահմանված դեպքերում կրթական ծառայությունների դադարեցման ընթացքում առաջացած բացակայությունները համարվում են անհարգելի:

4. Սույն կանոնակարգով չնախատեսված Համալսարանի սովորողների ուսման վճարի չափերը սահմանվում են համաձայն ռեկտորի հրամանի կամ սովորողի հետ կնքված կրթության մասին պայմանագրի:

5. Համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի վճարովի ուսուցման համակարգի և սույն կանոնակարգով չնախատեսված վճարովի այլ համակարգերի սովորողների ուսման վճարի չափերը սահմանվում են ռեկտորի հրամանով:

6. ՀՀ Օրենսդրությամբ կամ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կամ ռեկտորի կողմից սահմանված (նախատեսված) դեպքերում ուսման վճարի չափեր կարող են սահմանվել նաև համապատասխան իրավական ակտի կամ փաստաթղթի հիման վրա:

7. Սովորողի հետ կնքված պայմանագրով՝ տվյալ կրթական ծրագրի կամ համակարգի համար նախատեսված ուսման վճարի չափերն ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն:

8. Ակադեմիական արձակուրդից, երեխայի խնամքի համար հատկացված արձակուրդից, զինվորական ծառայությունից վերադարձած սովորողների ուսման վճարի չափերը չի փոփոխվում:

9. Համալսարանի բարձրագույն կրթական համակարգի ֆակուլտետից այլ ֆակուլտետ, կրթական ծրագրից այլ կրթական ծրագիր, այլ բուհերից Համալսարան տեղափոխված, Համալսարանից ազատվելուց կամ հեռացվելուց հետո Համալսարանում վերականգնված սովորողների ուսման վճարի չափը սահմանվում է տեղափոխված (վերականգնված) կուրսի ընդունելության տարվա համար «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգով սահմանված ուսման վճարի չափով և սովորողի հետ կնքվում է նոր պայմանագիր:

10. Սովորողի նախաձեռնությամբ՝ Համալսարանի հետ կրթության մասին պայմանագիրը լուծվելու դեպքում Համալսարանի կողմից կատարվում է վերջնահաշվարկ, ըստ որի սովորողի ուսման վճարի մուծման պարտականությունն ավարտվում է ազատման մասին սովորողի կողմից դիմում ներկայացնելու հաջորդ օրով:

11. Սովորողի հեռացվելու դեպքում Համալսարանի կողմից կատարվում է վերջնահաշվարկ, ըստ որի ուսման վճարի մուծման պարտականությունն ավարտվում է հեռացման մասին ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը կամ այլ գրավոր հիմնավորումը ներկայացվելու հաջորդ օրով:

* * *